«Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ» ՇՔԱՆՇԱՆ ՎՐԵԺ ՄԱՐԿՈՍՅԱՆԻՆ

Սեպտեմբերի 29-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, Վեհարանի հանդիսությունների դահլիճում, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսը «Ս. Գրիգոր Լուսավորիչ» շքանշան հանձնեց «Տիգրան Մեծ» հրատարակչության տնօրեն Վրեժ Մարկոսյանին՝ բարձր գնահատելով նրա ազգօգուտ ու եկեղեցաշեն արդյունաշատ վաստակը:

Շքանշանի հանձնման հանդիսությունը բացվեց Տ. Պարույր քահանա Ավետիսյանի ողջույնի խոսքով: Այնուհետև «Ազգ» օրաթերթի գլխավոր խմբագիր Հակոբ Ավետիքյանը ներկայացրեց մեծարյալի կյանքի ուղին և արդյունաշատ վաստակը:

Ապա «Էջ Միածինն ի Հօրէ» շարականի երգեցողության ներքո ներս բերվեց Հայրապետական Սրբատառ Կոնդակը և ընթերցվեց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի լուսարարապետ Տ. Արարատ եպիսկոպոս Գալթագճյանի կողմից:

Հայրապետական Կոնդակում ի մասնավորի ասվում է. «*... Շարունակելով մեր Եկեղեցուն օգտակար լինելու պայծառ ավանդները, որոնք դարերով խնամվել ու պահպանվել են մեր ժողովրդի հոգում, Դուք հավատավոր ու ազնիվ ոգով ստանձնեցիք Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Վազգենյան մուտքի կառուցման հովանավորությունը, որով առավել բարեզարդվեց ու գեղեցկացավ Մայրավանքի շրջակայքը: Մեր Սուրբ Եկեղեցուն մատուցած Ձեր ծառայությունները արդյունաշատ են նաև Սուրբ Էջմիածնի հրատարակչական առաքելությանը «Տիգրան Մեծ» տպարանի բերած կարևոր աջակցությամբ: Հիրավի, Ձեր ընտանիքի անունն այլևս անբաժան է Սուրբ Էջմիածնի պատմությունից և մշտապես աղոթքով ու բարեմաղթանքներով պիտի հիշվի երախտագետ հայորդյաց կողմից*» (տե՛ս էջ 25):

Կոնդակի ընթերցումից հետո Նորին Սրբությունը մեծարյալի կուրծքը զարդարեց Հայ Եկեղեցու բարձրագույն՝ «Ս. Գրիգոր Լուսավորիչ» շքանշանով:

Շքանշանի հանձնումից հետո երախտագիտության խոսք ասաց տիար Վրեժ Մարկոսյանը՝ խորին շնորհակալություն հայտնելով ընծայված մեծ պատվի համար:

Հանդիսությունը փակվեց Ամենայն Հայոց Հայրապետի օրհնության խոսքով: Վեհափառ Հայրապետը, անդրադառնալով մեծարյալի արժանիքներին և Եկեղեցուն ու ազգին բերած ծառայություններին, գոհունակությամբ արձանագրեց. «*Բարեգործությունը հոգեկերտվածք է: Շատ անձեր կարող են ունենալ նյութական հարստություն, բայց բարեգործ լինելու համար պետք է ունենալ սեր, անվերապահ սեր Ազգի, Հայրենիքի և Եկեղեցու նկատմամբ: Այդ սիրով է հատկանշված անունը տիար Վրեժ Մարկոսյանի*»:

Հանդիսության ընթացքում հայ և եվրոպական կոմպոզիտորների ստեղծագործություններով ելույթ ունեցավ Մայր Տաճարի երգչախումբը՝ ղեկավարությամբ Ռուբեն Շարբաթյանի:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ